Արձանագրություն N 2

ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

17.12.2018թ
ժամը 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Տ. Մանուկյանը
Հանձնաժողովի անդամներ	Մ. Գրիգորյանը /գնահատող /
	Ս. Թորոսյանը /գնահատող/
	Հ. Հարությունյանը /բացող/
	Ա. Յազչյանը /բացող/
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1. ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտի բացման մասին

(Տ. Մանուկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

ա) Գնման առարկայի նախահաշվային գինը կազմում է 12000000 ՀՀ դրամ:

բ) գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել <<Արխիտոն>> ՍՊԸ-ն, ք. Երևան, Վարդանանց 32,

գ) Ընթացակարգի հայտի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել,

դ) <<Արխիտոն>> ՍՊԸ-ի կողմից առաջարկված գինը հետևյալն է.

ՀՀ դրամ

Հ/Հ	*Մասնակցի անվանումը*	*Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի գումարը)*	*ԱԱՀ*	*Առաջարկված ընդհանուր գինը*
1	<<Արխիտոն>> ՍՊԸ	12000000	-	12000000

ե) <<Արխիտոն>> ՍՊԸ-ի հայտում.

- կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին տեղեկանքում ներառված չէ հրավերով պահանջվող բարձրագույն կրթությամբ ճարտարագետ էներգամատակարարման որակավորմամբ մասնագետ,

- բացակայում է բարձրագույն կրթությամբ ճարտարագետ ջրամատակարարման և ջրահեռացման որակավորմամբ մասնագետի (Արթուր Վագիֆի Բաղդասարյան) անձնագիրը (ներկայացված ճամփորդական փաստաթղթի վավերականության ժամկետը ավարտվել է 01.08.2018 թվականին),

2. ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի սույն նիստը կասեցնելու մասին

(Տ. Մանուկյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.1 կետի ե) կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 41-րդ կետի պահանջները՝ մինչև 19.12.2018թ. ժամը 11:00-ն կասեցնել սույն նիստը և հանձնարարել

հանձնաժողովի քարտուղարին 17.12.2018թ. էլեկտրոնային եղանակով տեղեկացնել <<Արխիտոն>> ՍՊԸ-ին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել սույն արձանագրության ե) ենթակետով արձանագրված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի սույն նիստը շարունակելու օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Մանուկյան)

3.1 Հանձնաժողովի սույն նիստը շարունակել 2018 թվականի դեկտեմբերի 19-ին ժամը 11:00-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ		Տ. Մանուկյան
Անդամ		Մ. Գրիգորյան
		Ս. Թորոսյան
		Հ. արությունյան
		Ա. Յազչյան
Քարտուղար		Հ. Ավետիսյան

Արձանագրություն N 2.1

ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

19.12.2018թ
ժամը 11:00

Մասնակցում էին.

Հանձնաժողովի նախագահ	Տ. Մանուկյանը
Հանձնաժողովի անդամներ	Մ. Գրիգորյանը /գնահատող /
	Ս. Թորոսյանը /գնահատող/
	Հ. Հարությունյանը /բացող/
	Ա. Յազչյանը /բացող/
Հանձնաժողովի քարտուղար	Հ. Ավետիսյանը

1. ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգին ներկայացված հայտի բացման մասին (շարունակություն)

(Տ. Մանուկյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ գնահատող հանձնաժողովի 17.12.2018թ. թիվ 2.1 ենթակետով արձանագրած անհամապատասխանությունները <<Արխիտոն>> ՍՊԸ-ի կողմից շտկվել է սահմանված ժամկետում:

1.2 Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց հաստատել ընթացակարգի հայտի գնահատման արդյունքը.

h/h	Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
1	<<Արխիտոն>> ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

2. ՀՀՔԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի մասին

(Տ. Մանուկյան)

2.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 1.2 կետը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին ենթակետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց.

- Առաջին տեղ զբաղեցնող ճանաչել <<Արխիտոն>> ՍՊԸ-ին,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու մասին

(Տ. Մանուկյան)

3.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0

4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ. Մանուկյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 3.1 կետով նախատեսված հարցման պատասխանը ստանալուն հաջորդող աշխատանքային օրվա ժամը՝ 11:00-ին, բայց ոչ ուշ քան 26.12.2018թ. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում:

Ընդունվել է որոշում՝ կողմ -5, դեմ- 0:

Հանձնաժողովի Նախագահ		Տ. Մանուկյան
Անդամ		Մ. Գրիգորյան
		Ս. Թորոսյան
		Հ. արությունյան
		Ա. Յազչյան
Քարտուղար		Հ. Ավետիսյան